ACCU-CHEK® Instant

Roche

(HY)

Սկսեք այստեղից

Օգտագործման համառոտ ուղեցույց

Ձեր չափող սարքի հետ համատեղելի շաքարային դիաբետի կառավարման հավելվածներ գտնելու համար այցելեք՝ www.accu-chek.com:

ACCU-CHEK®

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Նոր և օգտագործված մարտկոցները հեռու պահեք երեխաներից: Լրացուցիչ տեղեկությունների համար տես Օգտագործողի ձեռնարկը:

- Այս Օգտագործման համառոտ ուղեցույցը չի փոխարինում Accu-Chek Instant արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարքի Օգտագործողի ձեռնարկին: Օգտագործողի ձեռնարկը պարունակում է սարքի հետ վարվելու կարևոր հրահանգներ և լրացուցիչ տեղեկություններ:
- Մաշկը ծակող սարքը նախատեսված է միայն անհատական օգտագործման համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Միշտ ունեցեք պահեստային մարտկոցներ:
- Մարտկոցի օգտագործման ժամկետը կարող է տարբերվել՝ կախված այնպիսի գործոններից, ինչպիսիք են ջերմաստիճանը և մարտկոցի արտադրողը:

ՎԵՐՋԻՆ ԹԱՐՄԱՑՈՒՄ: 2020-01

Roche Diabetes Care GmbH
Sandhofer Strasse 116
68305 Mannheim, Germany
www.accu-chek.com

CE 0123

ACCU-CHEK, ACCU-CHEK INSTANT և SOFTCLIX ապրանքանշանները Roche ընկերության ապրանքանշաններ են:

© 2020 Roche Diabetes Care

V1210

Չափող սարքի ընդհանուր նկարագիր



1. Չափող սարքի կոճակ
2. Էկրան
3. Թիրախային միջակայքի ցուցիչ
4. Մարտկոցի դռնակ
5. Թեստի շերտի ճեղք
6. Միկրո USB մուտք

Մաշկը ծակող սարքը կարգավորելը



Ծանոթացեք Accu-Chek Softclix մաշկը ծակող սարքին:

Փոխադրման տուփի գրպանիկից նշտար հանեք:



Հանեք ծայրապանակը՝ ուղիղ դեպի դուրս քաշելով: Մի՛ պտտեք ծայրապանակը:



Նշտարը տեղադրեք մաշկը ծակող սարքի մեջ, մինչև այն չխկա:



Պտտելով հանեք նշտարի պաշտպանիչ ծայրապանակը:



Ծայրապանակը նորից դրեք մաշկը ծակող սարքի վրա: Համոզվեք, որ ծայրապանակի վրա գտնվող դիրքավորման ակոսը և մաշկը ծակող սարքի դիրքավորման գիծը մեկ գիծ են կազմում:

Նշտարի խորությունը դրեք թափանցման հարմար խորության վրա: Սկսեք 2-ից: Համեմատաբար կոպիտ մաշկի համար ընտրեք ավելի բարձր թիվ:



Պատրաստ վիճակի բերելու կոճակը ներս սեղմեք այնքան, ինչքան կգնա՝ գրիչի պես: Պատրաստ վիճակի բերելու կոճակը սեղմելու ընթացքում մի՛ սեղմեք ձգանի կոճակը: Երբ մաշկը ծակող սարքը պատրաստ լինի, ձգանի կոճակի գույնը կդեղնի:



Մի կողմ դրեք մաշկը ծակող սարքը, մինչև պատրաստ լինեք մատը ծակելուն:

Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման թեստ կատարելը

1



Ձեռքերը լվացեք տաք օճառաջրով և լավ չորացրեք:

2



Ստուգեք պիտանելիության ժամկետը թեստի շերտերի տարայի վրա: Մի՛ օգտագործեք պիտանելիության ժամկետը լրացած թեստի շերտեր:

3

Թեստի շերտերի տարայից թեստի մի շերտ հանեք: Կափարիչն ամուր փակեք:

4

Թեստի շերտի մետաղական ծայրը մտցրեք չափող սարքի մեջ: Չափող սարքը կմիանա:



Կհայտնվի թարթող կաթիլի նշան:

5



Մաշկը ծակող սարքը պինդ սեղմեք մատի ծայրի կողքի մասին և սեղմեք դեղին ձգանի կոճակը՝ մատը ծակելու համար:

6



Հպեք թեստի շերտի **դեղին ծայրը** արյան կաթիլին: Հեռացրեք ձեր մատը թեստի շերտից, երբ հայտնվի թարթող ավազի ժամացույցի նշանը: Թեստի շերտի վրա արյուն մի՛ դրեք:





Թեստի արդյունքը կհայտնվի էկրանին չանցած 4 վայրկյան:

Նախքան ավարտելը...

Հանեք մաշկը ծակելու սարքի ծայրապանակը: Նշտարը պահեք ձեր հակառակ ուղղությամբ: Դուրս սահեցրեք արտարկիչը՝ նշտարը հանելու համար:

Սխալի մասին հաղորդագրություն

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սխալի կոդը և **Err** հաղորդագրությունը միմյանց կհերթագայեն էկրանին բոլոր կոդավորված սխալի մասին հաղորդագրությունների (E-1-ից մինչև E 14) դեպքում:

Եթե ստորև նշված սխալի մասին հաղորդագրություններից որևէ մեկը ցանկացած պահի հայտնվի էկրանին, անմիջապես նայեք **Հաղորդագրություններ սխալների վերաբերյալ** բաժինը՝ Օգտագործողի ձեռնարկի **Չափող սարքի պահպանումը և ծագած խնդիրների լուծումը** գլխում:

E-1 Թեստի շերտը կարող է վնասված լինել, ճիշտ տեղադրված չլինել կամ նախապես օգտագործված լինել: Հանեք և նորից տեղադրեք թեստի շերտը, կամ, եթե վնասված է կամ նախապես օգտագործված, փոխարինեք նորով:

E-3 Տեղի է ունեցել չափող սարքի կամ թեստի շերտի սխալ: Այս սխալի մասին հաղորդագրությունը կարող է հայտնվել, եթե թեստի շերտերի տարայի կափարիչը ամուր փակված չի եղել: Թեստի շերտերը կարող են վնասված լինել ոչ ճիշտ պահպանելու կամ դրանց հետ ոչ ճիշտ վարվելու հետևանքով: **Երբեք թերապիայի մասին որոշումներ մի՛ կայացրեք սխալի մասին հաղորդագրության հիման վրա:** Կրկնեք արյան մեջ գլյուկոզայի թեստը: Եթե E-3 սխալի մասին հաղորդագրությունն է հայտնվում երկրորդ անգամ, ապա ստուգիչ լուծույթով և նոր թեստի շերտով կատարեք ստուգիչ թեստ: Տե՛ս «Ստուգիչ թեստ կատարելը» բաժինը «Ստուգիչ թեստեր» գլխում: Եթե շարունակում եք ստանալ E-3 սխալի մասին հաղորդագրությունը, օգտագործեք այլընտրանքային մեթոդ ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակի ստուգման համար, ինչպիսիք են պահեստային չափող սարքի և թեստի շերտի օգտագործումը: Եթե այլընտրանքային մեթոդը ցույց է տալիս արյան մեջ գլյուկոզայի չափազանց բարձր արդյունք, կամ եթե այլընտրանքային մեթոդը հասանելի չէ, **անմիջապես դիմեք ձեր բուժաշխատողին:**

Հազվագյուտ դեպքերում E-3 սխալի մասին հաղորդագրությունը կարող է ցույց տալ, որ ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակը ծայրահեղ բարձր է և համակարգի չափման միջակայքից դուրս: **Տե՛ս «Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի արտասովոր արդյունքներ» բաժինը «Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման թեստեր» գլխում՝ սխալի մասին հաղորդագրության այլ հնարավոր պատճառների համար:**

E-4 Չափման նպատակով թեստի շերտին քսվել է ոչ բավարար քանակի արյուն կամ ստուգիչ լուծույթ, կամ դրվել է թեստն սկսվելուց հետո: Դեն նետեք թեստի շերտը և կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման կամ ստուգիչ թեստը:

E-6 Արյունը կամ ստուգիչ լուծույթը դրվել է թեստի շերտին նախքան էկրանին կաթիլի առկայծող նշան հայտնվելը: Դեն նետեք թեստի շերտը և կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման կամ ստուգիչ թեստը:

E-7 Էլեկտրոնային սխալ է տեղի ունեցել: Հանեք մարտկոցները, առնվազն 2 վայրկյան սեղմեք և պահեք չափող սարքի կոճակը և կրկին տեղադրեք մարտկոցները: Կատարեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման կամ ստուգիչ թեստ:

E-8 Ջերմաստիճանը բարձր կամ ցածր է համակարգին համապատասխան միջակայքից: Համակարգի օգտագործման պայմաններին ծանոթացեք թեստի շերտերի փաթեթի ներդիրում: Տեղափոխվեք համապատասխան պայմաններով վայր և կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման կամ ստուգիչ թեստը: Չափող սարքն արհեստական կերպով մի՛ տաքացրեք կամ հովացրեք:

E-9 Հնարավոր է՝ մարտկոցների լիցքը սպառվել է: Նորից միացրեք չափող սարքը: **Եթե գտնվում եք ցուրտ միջավայրում, տեղափոխվեք ավելի տաք ջերմաստիճանով վայր և նորից ստուգեք:** Եթե հաղորդագրությունը շարունակում է հայտնվել մի քանի փորձերից հետո, փոխեք մարտկոցները: Եթե մարտկոցները փոխելուց հետո հաղորդագրությունը նորից հայտնվի, մարտկոցները հանեք, առնվազն 2 վայրկյան սեղմեք ու պահեք չափող սարքի կոճակը, ապա մարտկոցները կրկին տեղադրեք:

E 10 Հնարավոր է՝ չափող սարքի ներքին ժամացույցը հարկավոր է նորից կարգավորել: Սեղմեք չափող սարքի կոճակը: Եթե ժամանակը և ամսաթիվը սահմանված են, ապա ձեզ հարկավոր է վերասահմանել դրանք: Տե՛ս **ժամանակն ու ամսաթիվը** բաժինը՝ Օգտագործողի ձեռնարկի **Ձեր նոր համակարգը** գլխում:

E 11 Հնարավոր է՝ թեստի շերտը վնասված է: Կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի ստուգումը կամ ստուգիչ թեստը՝ նոր թեստի շերտով:

E 12 Ձեր արյան նմուշը կարող է պարունակել ասկորբատի բարձր մակարդակ: Դիմեք ձեր բուժաշխատողին:

E 13 Թեստի շերտի ճեղքում կարող է առկա լինել հեղուկ կամ օտար նյութ: Հեռացրեք և նորից տեղադրեք թեստի շերտը կամ կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի ստուգման կամ ստուգիչ թեստը նոր թեստի շերտով: Եթե սխալը շարունակվի, դիմեք Roche-ին:

E 14 Տեղի է ունեցել էլեկտրոնային սխալ: Դիմեք Roche ընկերությանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սխալի մասին հաղորդագրությունը շարունակվելու դեպքում դիմեք Roche ընկերությանը: